

3284

943

891.71

Q-39

891.71-32

Ա-39

48

ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ

Թարգմ. ռուսերէնից

Մ. ՏԷՐԵԱՆ.

ՄՈՍԿՈՒԱ

ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.

1893

(55)

2003

891.71
Ա-39

ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ



Թ ա ր գ ժ ո ու լ ս ե ր է ն ի ց

Մ. ՏԻՐԵԱՆ.

1005
21840

2

ՄՈՍԿՈՒԱ

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ Ի.

1893

(57)

ՅԱՐԱ ՔՅԳ ՅՐԱ

Дозволено Цензурою. С.-Петербургъ 20 Октября, 1892 года.

Типографія М. Бархударова, Москва, Мясницкая, д. нас. Ананова.

ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ.

I.

Թարմ վերքի պէս տանջում է ֆրանսիացիներին և գերմանացիներին այն պատերազմի յիշողութիւնը, որ տեղի ունեցաւ նրանց մէջ սրանից քսան տարի առաջ:

Այդ պատերազմի ժամանակ գերմանական զօրքը յաղթանակով մտնում էր Ֆրանսիայի խորքերը: Ֆրանսիացիք կատաղաբար դիմադրում էին և արեան հեղեղներ էին հոսում ֆրանսիական հողի վրայ: Պատերազմը արդէն վերջանալու վրայ էր, երբ Արդենան լեռներում մի զիւղի փողոցում, ֆրանսիական կամաւոր հրացանաձիգները սպանեցին վեց գերմանացի զինուորներ, որոնք ուղարկուած էին իրանց իշխանութիւնից ուռեստի պաշար ժողովելու:

Այդ անցքից յետոյ անմիջապէս զիւղը մտաւ գերմանական հետեակ զինուորների մի գունդ: Ֆրանսիացի հրացանաձիգները փախան, ծածկուեցին լեռներում: Գերմանացի սպան սաստիկ կատաղած իր զինուորների սպանուելու պատճառով, մեղադրում էր բոլոր զիւղի բնակիչներին որպէս գործակից մարդասպաններին և պահանջում էր յանձնեն իրան վեց հոգի զիւղացիներ, որոնց նրա վճռի համաձայն հրացանի պիտի բռնէին սպանուած վեց գերմանացիների վրէժն առնելու համար: Իսկ եթէ

կամովին չհամաձայնեն յանձնել իրան վեց հոգի գիւղացիներ, սպան սպառնում էր ամբողջ գիւղը կրակ տալ:

Վախից գլխները կորցրած գիւղացիները չէին իմանում ինչ անեն. ամենեւին յոյս չէր կարելի զնել, որ իրանց կ'խնայեն կամ կ'զլթան: Նոյնպէս ոչ մի յոյս չ'կար, որ փախած հրացանաձիգները կ'վերադառնան և իրանք իրանց կ'յանձնեն թշնամուն: Մնում էր միայն վիճակ ձգեն, թէ ով մեռնի: Եւ այդպէս վեց բոլորովին անպարտ գիւղացիներ, որոնց վրայ էր ընկել վիճակը, յանձնուեցին գերմանացիներին: Նրանց փակեցին գիւղական ուսումնարանում պահապանների հսկողութեան ներքոյ:

II.

Պատիժը պիտի իրագործուէր միւս օրն առաւօտեան: Երեկոյեան գերմանացի սպայի մօտ եկաւ գիւղի քահանան: Նա խնդրեց սպայից, որ իրան թողնեն բանտարկեալները մօտ նրանց վերջին անգամ մխիթարելու, համաձայն քրիստոնէական վարդապետութեան: Սպան թոյլ տուեց, և օրապահ զինուորը լապտերը ձեռին բռնած տարաւ քահանային մոլթ ուսումնարանը, զրեց լապտերը սեղանի վրայ, իսկ ինքը մնաց դռան մօտ կանգնած Փրանսիացիների վրայ հսկելու համար: Լապտերը աղօտ լոյսով լուսաւորում էր բանտարկուած գիւղացիներին: Նրանց ձեռքերը կապած էր մէջքներին, իսկ բոլորի ոտները պնդ կապուած էր մի ընդհանուր շուանով: Գիւղացիները այնքան թուլացել էին սովածութենից, վշտից և նրանց մարմինը սխմող պարանոցներից, որ հազիւ էին հասկանում քահանայի խօսքերը: Նրանցից երկուսը ընկած էին պատի տակ ուշաթափ, իսկ մէկը զոգում էր տենդից: Չուանի մի ծայրին դէպի ձախ ըստ երեւոյթին հանդարտ

կանգնած էր մի քառասուն տարեկան բարձրահասակ գիւղացի, հինգ մանկահասակ որբերի մի հայր:

Նա առաջ անտրտուն լսում էր քահանայի խօսքերը, բայց յուսահատութիւնը քանի զնում, աւելի ու աւելի էր ախրում նրա սրտին, վերջապէս նա էլ չհամբերեց և զայրացած գոչեց.

— Այ անիծուի՜ այդ պատերազմը: Ձեր բանը հեշտ է, տէր հայր, դուք միայն մխիթարում էք ուրիշներին. ձեր վերարկուն ձեզ ամեն բանից կ'պաշտպանի: Ախար մեր մեղքը ի՞նչ է, մենք ի՞նչ մեղաւոր ենք, որ մեր մարդասպանները սպանել են նրանց մարդասպաններին: Գայլերն իրար միտ են ուտում, կուժն ու կուլէն ոչխարների զըլխին է կոտորում: Թող Աստուած անիծի այդ բոլոր եղբայրասպան հայէններին:

Դրանից յետոյ նա հանդարտուեց և արտասուելից աչքերով հեկեկաց.

— Մի, իմ երեխէք, իմ զառնուկ, իմ խեղճ երեխէք, ի՞նչ կ'լինի ձեր օրը, դուք անտէր, անտիրական կ'կորչէք առանց ձեր հայրիկի:

Յետոյ դարձեալ զայրացած գոռաց.

— Որ այդպէս է, աւելի լաւ է թող երեխաներիս էլ ինձ հետ սպանեն: Միւսնոյն է, նրանք առանց ինձ սոված կ'կոտորուեն: Ո՞վ գիտի, զուցէ նրանք էլ մեղաւոր են պարոն գերմանացիներին սպանելու մէջ, որոնք գաղանների պէս վրայ պրծան մեզ վրայ: Կարող է պատահած լինի, որ իմ երեք տարեկան տղաս էլ իր ձեռքերը թաթախել է մարդու արեան մէջ: Թող նրան էլ զնտակահար անեն:

Խորին վշտով լսում էր քահանան գիւղացու հեծեճանքը, փորձ էր անում նրան հանգստացնել, բայց անօգուտ:

Նա էլ չ'շարունակեց իր մխիթարելը, հրաժեշտի ող-

ջոյն տուեց զիւղացիներին, դուրս եկաւ և խոր մտածմունքի մէջ ընկղմած գիմեց զէպի գերմանացի սպայի բնակարանը:

III.

Սպան նստած էր խրճիթի պատի տակ, բազոցի վրայ (завалинка) և սքանչանում էր տաք և աստեղազարդ գիշերով: Նա ծխում էր իր ճենապակեայ չիբուխը և մօտը դրած գաւաթից կում-կում գարեջուր էր խմում:

Քահանան մօտեցաւ սպային և ասաց.

— Պարոն կապիտան, դուք կամենում էք հրացանի բռնել մեր զիւղացիներից վեց հոգու. այդ մարդկանցից ոչ մէկը ձեր գնտի զինուորների վրայ հրացան չի արձակել. այդ անողները հրացանաձիգներն են եղել, որոնք վաղուց փախել, անյայտացել են: Ես տեսնում եմ, ձեր միտքն այն չի, որ պատժէք իսկապէս մեղաւորներին, այլ ինչպէս երևում է այն է, որ սարսափ տարածէք ամբողջ շրջակայքի վրայ, կ'նշանակի ձեզ համար առանձին նշանակութիւն չունի թէ ով կ'սպանուի՝ Կիրակոսը թէ Մարկոսը:

Սպան գլխի ծանր ու բարակ շարժումով հաւանութիւն տուեց քահանայի ասածին, դուրս թողնելով բերնից ծխի թեթեւ օդակներ:

— Ես մինչև անգամ կարծում եմ, — շարունակեց քահանան, — որքան յայտնի մարդ լինի սպանուողը, այնքան օրինակը աւելի սոսկալի կ'լինի ամբողջ շրջակայքի համար: Եւ ես եկել եմ ձեզանից խնդրելու այնքան ողորմած լինէք, որ թող տաք ինձ փոխարինելու մի հինգ որբերի հօր: Թէ՛ նա, թէ՛ ես, երկուսս էլ ոչ մի մեղք չունենք, բայց անկասկած իմ մահս ձեզ համար աւելի ձեռնառու կ'լինի, որովհետեւ ինձ ճանաչում են բոլոր մեր շրջակայքում:

Քիչ մտածելուց յետոյ սպան կիսաբերան պատասխանեց.

— Եթէ այդչափ ցանկանում էք, հրամայէք, մենք կ'փոխենք:

Քիչ յետոյ քահանային տարան ուսումնարանը և կապեցին միւս բանտարկեալների հետ, իսկ որբերի հօրը արձակեցին բանտից:

IV.

Միւս օրը լուսաբացին իբրեւ գերի վերցրած զիւղացիներին և քահանային տարան զիւղեց դուրս գաշար: Սյնտեղ պատժի համար արդէն ամէն ինչ պատրաստ էր. — սպանուածներին թաղելու համար փորուած փոսը սեւին էր տալիս, մի խումբ գերմանացի զինուորներ պատրաստ կանգնած էին, լցրած հրացանները ձեռքներին:

Գիւղացիք գնում էին քաշէքաշ և գլխակոր, միայն քահանայի սիրտն էր տեղը և իր ընկերներին խրախուսում, սիրտ էր տալիս: Նրանց կանգնեցրին փոսի մօտ, իսկ նրանց առաջ շարուեցին զինուորները: Սպասում էին միայն սպային:

Քահանան աղօթում էր.

— Հայր մեր, ինչպէս քո սիրելի Որդին, նոյնպէս և ես, անարժանս, աղաչում եմ Քեզ՝ «թող զմեզս զոցա, զի ոչ գիտեն, զե՛նչ գործեն»:

Սպան երկար ժամանակ չէր գալիս: Կապրալը (տասնապետ) զինուորներից մէկին ուղարկեց զիւղը իմանալու ուշանալու պատճառը: Ուղարկուած զինուորը վազէվազ վերադարձաւ, հեռուից դռաւով՝ թէ գեներալը եկել է:

Զինուորները ուղղուեցին:

Վերջապէս երեւաց սպան, նրա կողքից գալիս էր ձիով գերմանացի գնեւալը իր հեռեօրդներով: Սպան մի

ձեռքով զինուորական պատիւ տալով, յարգանքով ինչ որ զեկուցանում էր գեներալին, իսկ միւս ձեռքով ցոյց էր տալիս կապկպոտած Ֆրանսիացիներին վրայ:

Գեներալը մօտ եկաւ զինուորներին և ողջունեց նրանց: Յետոյ աչքերը յառած նայեց քահանային և դարձաւ ինչ որ ասաց սպային, որից սպայի երեսը բոլորովին կարմրատակեց: Սյնու ամենայնիւ սպան պատկառանքով լսեց և դառնալով զինուորներին, բարձր ձայնով ասաց.

—Ճրացաններդ դատարկեցէ՛ք, նորին գերազանցութիւնը բարեհաճեց ներումն շնորհել այս բոլոր մարդկանց նրանց քահանայի քաջութեան համար. բոլորի կապանքները արձակեցէ՛ք:

Գեներալը մի անգամ էլ նայեց քահանային, ձեռքի շարժումով հրաժեշտի ողջոյն տուեց սպային և ձիու զլուխը դարձնելով հեռացաւ:

Գեներալի հեռանալուց յետոյ սպան բարկացած գոչեց.

—Դէ՛հ, շուտ արեք, դրանց կապանքները արձակեցէ՛ք, թող շուտով աչքիս առաջիցը հեռանան կորչեն... Երբոր քահանան անցնում էր սպայի մօտով, վերջինս ծաղրական կերպով բարե տուեց նրան և ասաց.

—Շնորհաւոր լինի:

Քահանան կանգ առաւ և հեղութեամբ պատասխանեց.

—Իսկ ես շնորհաւորում եմ ձեր զինուորներին:

Սպան զարմացած հարցրեց.

—Սյսինքն ինչի՞ համար:

—Նրա համար,—պատասխանեց քահանան,—որ նրանք ստիպուած չեղան մի անգամ էլ աւելի մարդասպանութիւն անել՝ սպանելով մեզ—իրանց եղբայրներին:

Սյս խօսքերի վրայ սպան բարկացած երեսը շուտ տուեց:

3284

ԳԻՆՆ Է 1 ԿՈՊ.

